№ 38 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 8 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1894 № 38

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 րուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մտատւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: „Շաւիղի“ բաժանորդագինն է մէկ թուման, կէս տարուանը վեց ղրան: Արտասահմանում՝ 3 րուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 րուբլի կամ 4 ֆրանք:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով. Téhéran Rédaction „CHAVIGH“.

Թաւրիզում՝ ցանկացողները կարող են գրուիլ Բաղդասար Մելիք Սաւադեանցի մօտ, Սալմաստում Յովհաննէս Ավրէսեանցի մօտ, Արտաբիլում՝ Յակոբ Էլչիբէկեանի մօտ, Նոր-Ջուղայում՝ Յովսէփ Բարսեղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Ջէյթունեանի մօտ, Մարաղայում՝ Մելքոն Խալափեանցի մօտ Ուրմիում՝ Ալէքսան Յովսէփեանցի մօտ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսկահայերի կանոնադրութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՅԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մարաղայից. Նամակներ խմբագրութեան. Ներքի լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. արտաքին լուրեր.—Բանասիրական. Փայտակարան կամ Ղարադաղ պատառը.—Յայտարարութիւններ:

Պարսկահայերի կանոնադրութիւնը

—

Մենք մեր 33 համարի մէջ խօսելով այն ձևի վերայ որով, „Մշակ“ լրագրի կարծիքով, պէտք է կազմուի և մշակուի պարսկահայերի ընդհանուր դպրոցական և եկեղեցական գործերին վերաբերեալ, կանոնադրութիւնը՝ խոստացել էինք մեր կածիքը յայտնել այդ ձևի ոչ աստիճան գործնական լինելու մասին:

Յարգելի լրագրի կարծիքով պէտք է „Առաջարկել պարսկահայերի երկու թեմական Առաջնորդներին, որ նորանք հայ ազգաբնակութեան պատգամաւորների և ներկայացուցիչների մասնակցութեամբ մի յանձնաժողով կազմեն որին և յանձնեն նոր կանոնադրութեան խմբագրութիւնը և մշակումը և ապա այդ կանոնադրութիւնն առաջարկեն Էջմիածնի հոգևոր իշխանութեան հաստատութեան“:

Այս ձևը, որչափ և ցանկալի լինէ, մեր կարծիքով Պարսկաստանի մէջ մի այդ տեսակ յանձնաժողովի կազմութիւնը մօտ անկարելի է: Բաց ի այլ և այլ արգելքներից կայ մի ահագին դժուարութիւն որի վերայ չէ մտածում մեր ռուսահայ յօդուածագիրը.—այդ է հաղորդակցութեանց դժուարութիւնը: Երևակայեցէք, հարկաւոր է զանազան քաղաքների պատգամաւորների համար 30—40 օրուայ ճանապարհորդութիւն կատարել միայն գնալու և նոյնչափ ևս վերադառնալու համար, ի հարկէ մի այդքան էլ պէտք է մնալ կեդրոն որոշուած քաղաքում կանոնադրութիւնը մշակելու համար: Մենք կարծում ենք որ շատ քչերը մեր մէջ յանձն կառնէին այդքան զոհողութիւն և գուցէ, եթէ կամենային էլ անկարող՝ կը լինէին, իւրեանց անձնական զբաղմունքների պատճառով, և հաստատ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՂԱՐԱԴԱՂ

(Շարունակութիւն 35 Թուից)

—

Բոլորիս ուշը դէպի այնտեղ դարձաւ եւ տեսանք մի կապոյտ ձիաւոր արագընթաց դէպի գիւղն է գալիս կոչելով «այ հարայ ելէք»: Մի անընթաթում արագընթաց նժոյգը գիւղը հասաւ:

Գիւղացիք ձայնիցը ճանաչելով ձիաւորին, հարցրին «Ա—Տէր ինչ կայ, շուտ ասա»:

Ձիաւորը յայտնեց թէ նորաշէնից մի մղոն հեռու Թուրք աւազակները թափուել են հայերի վերայ եւ աւարի են առել նոցա ձիերն ու ջորիներն եւ փախցրել են դէպի Օղայի կողմերը. նոյնպէս յայտնեց թէ Նորաշէնցիք ուրիշ ճանապարհով գնացել են իսկ ինքն եկել լուր է տալու Ցիւժի Թուրքերին եւ անցել Օղա: Խօսքը վերջացնելուց գիւղը ապան եւ մի խումբ զինուած Թուրքեր, ձիաւոր ու ոտով, սոքա Ցիւժի Թուրքերն էին, եկել էին օգնութեան: Կապոյտ ձիաւորը սուրը հանեց եւ մի քանի պատուէր տալով կոչեց. «Դէ յառաջ»:

Բոլորը վազեցին զանազան խմբերի բաժանուելով, ձիաւորներին առաջնորդեց կապոյտ ձիաւորը: Սա Նորաշէնի հայր Տէր Ադամն էր: Ես առաջին անգամն տեսնելով այսպիսի մի բռնանայ իմ եռանդս էլ շարժուեց եւ ձիս նստելով մասնակցեցայ Տէր հօր խմբին:

Օղայից ճանապարհուելուց մի ժամ յետոյ Տէր հօր հեծելախումբը (Թուրքերից եւ հայերից) հասաւ աւազակներին, որոնք նեղ ճանապարհով փախցնում էին հայերից առած աւարը:

Ցեռուից տէր հայրը գոչեց «Էյ հարա ափարիր սըգ»: Աւազակները դիմադրել կամեցան. բայց դուր եղաւ, շուտով հայոց միւս խմբի ձայները առջեւի կողմից լսուեցաւ: Աւազակները շրջապատուած էին:

Հրացանաձգութիւն դադրեց: Տէր Ադամը իրեն թիկունք առնելով Օղայի Մելիք Ղահրամանին եւ Ցիւժի Մուստաֆա բեգին, աւազակների մօտ գնաց եւ պահանջեց, որ ունեցածները թողնեն ու հեռանան եթէ ոչ...:

Աւազակները յոյսները կտրած ամեն ինչ թողին հայերին ու հեռացան:

Հայ եւ Թուրք գիւղացիները վեր առնելով աւարը զակների ունեցածները արեւածագին Օղա դարձան եւ վճռեցին այն օրը գործի չգնալ. այլ տարած յաղթանակի համար ուրախութեամբ անցկացնել այդ օրը:

Այսպէս Ղարադաղի Թուրքերը հայերի հետ ընկերական եւ դրացիական սերտ կապակցութիւն ունէին:

Ե.

Մեշափարա.

—

Երկու շաբաթի չափ Օղա մնալուց յետոյ ճանապարհուեցայ դէպի Մեշափարա:

Արեւածագին ելայ Օղայից. գիւղի արեւելեան կողմում գտնուած աղբիւրակի մօտ կուտակուած աղբի վերայ նստոտած էին գիւղացիները եւ խօսում էին շատ աղմկալից ձեւով, գիւղական զանազան գործերի վերայ:

կարելի է ասել որ այն բոլոր անձնաւորութիւնները, որոնց փորձառութիւնից եւ տեղեկութիւններից կարելի է օգուտ քաղել անկարող կը լինին տեղից շարժուելու։ Ո՛ւր մնաց դեռ այն կարեւոր կէտը, որ շատ քչերին է ոգեւորում այդ կանոնադրութեան նոյն իսկ կարիքը, երբ ամեն քաղաքում կը գտնուի մի սուտսուտ խումբ որ իւր բոլոր կարողութեամբ կը մաքառի այդ կանոնադրութեան գաղափարի դէմ, կանոնադրութիւն որ որոշուած է չափ ու սահման դնել անսանձ հերոսների շահատակութեանցը։

Մեր կարծիքով՝ ամենից առաջ Էջմիածինը պէտք է հրահանգ ուղարկէ երկու թեմական առաջնորդներին պատուիրելով որ նոքա իրանց թեմի գլխաւոր քաղաքներում կազմեն մի մի յանձնաժողով, կանոնաւոր ծխական ընտրութեամբ և յանձնեն այդ ժողովին մշակել նախագծներ ապա ուղարկել այդ զանազան նախագծները թեմական Առաջնորդներին որոնք իրանց հերթին պէտք է ուղարկեն Էջմիածին, ուր Վեհափառ Կաթուղիկոսը կը բարեհաճէր յանձնել այդ զանազան նախագծները մի ձեռնհաս յանձնաժողովի իւր կողմից յատուկ այդ պաշտօնով անուանուած, որ բաղդատելով նախագծները, դուրս կը բերէր նորանցից մի վերջնական նախագիծ, Վեհափառ Կաթուղիկոսի վաւերացմանը ենթարկելու։

Այս ձեւը, թէեւ ունի իւր անյարմարութիւնները, և չէ կարող առիթ տալ գաղափարների ազատ փոխանակութեան այնչափով ինչ որ „Մշակի" առաջարկած ընդհանուր յանձնաժողովը, բայց գոնէ իրագործելի լինելու առաւելութիւնն ունի։ Այնու ամենայնիւ մենք յաւակնութիւն չունինք միակ նախադասելի միջոցը առաջարկած լինելու, այլ ուրախութեամբ կը հիւրընկալենք մեր էջերում որեւիցէ ուսումնասիրութիւն այս մասին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նամակ խմբագրութեան

—

Թէհրան 3 Հոկտեմբ. 94

Ինչպէս արդէն մի քանի օր առաջ տոմսակներով յայտարարուած էր, անցեալ կիրակի Հայկազեան վարժարանում շատ շքեղ և հանդիսաւոր կերպով տեղի ունեցաւ մի գրական երեկոյթ ընդ հովանաւորութեամբ առաջ. տեղապահ Պարսկաստանի և Հնդկաստանի հայոց Ս. Ծ. վ. Այվատեանի։ Ներկայ էին մօտաւորապէս 300 անձինք երկու սեռից, վարժարանի բակն ամեն կողմ լուսաւորուած էր, նոյնպէս սրահն և դահլիճն առիւծանշան գոյնզգոյն դրօշակներով զարդարուած և կահաւորուած էր։ Որովհետեւ այդ երեկոյթն ի նպաստ Ընթերցասիրաց ընկ. էր տրուած, նախ հայր Այվատեան իւր սովորական պերճախօս ոճով բացատրեց ընթերցասիրութեան խաղացած դերը մարդու կեանքում, և նորա հազարաւոր օգուտները, և մի և նոյն ժամանակ ապացոյցներով ցոյց տուաւ որ ընթերցասիրութեան պակասութիւնն է որ մեզ այսպիսի աննախանձելի դրութեան մէջ է թողել։ Իսկ իւր քարոզի վերջաբանի մէջ նա կրկին դարձաւ դէպի այն նիւթըն որ արդէն վեց շաբաթներից ի վեր քարոզում է, այն է համերաշխութիւն ազգային գործերի մէջ.—բայց աւաղ լըսողն ո՞վ է։

Ապա բժիշկ Բագիլը բուսական դիւրըմբռնելի ոճով բացատրեց դիֆտէրիտի և մի քանի այլ հիւանդութիւնների բսկզբնական պատճառները և մի և նոյն ժամանակ նորանցից ազատ մնալու միջոցները։ Որից յետոյ ընկերութեան գանձապահ Միհրան-խան Գրիգորեանց ընկերութեան, կողմից գրաւոր կերպով, իւր շնորհակալութիւնը յայտնեց հայր Այվատեանին, որ բարեհաճել էր իւր հովանաւորութիւնը տալու ընկերութեան։

Սակայն այդ բոլորի մէջ մի բան կար որ ինձ այնչափ յուզեց և գրգռեց որ կարծում եմ թէ իւրաքանչիւր անոխակալ սիրտ պէտք է գրգռուի, լսելով այդ։ Ամաչում եմ յիշելու որ այդ ցաւալի իրողութիւնը ծագում է երկու պարոնների քինախնդրութիւնից և վրէժխնդրութիւնից, որոնք ուրիշ միջոց չը կարողանալով գործ դընել, պատճառ և դրդիչ եղան որ այս շքեղ երեկոյթում Հայկական նորակազմ նուագիչ խումբը չը նուագէ, թէ ինչ միջոցների դիմեցին այդ երկու պարոնները ահա բացատրեմ մի առ մի։

Քանի օր առաջ գեր. հայր Այվատեան նամակով խնդրեց մեր նուագիչ խմբի մասնաժողովից, որ խումբը կիրակի գիշեր Հայկազեան վարժարանում տրուած երեկոյթին մասնակցէ։ Այս նամակը կարդալուն պէս մեր խմբի տնօրէնի և քարտուղարի *) քէն ու ոխը շարժուեց, ինչ անեն ինչ չանեն որ կարողանան մի խաղ խաղալ, որ մեր խումբը չերթայ այնտեղ։ Պ. տնօրէնը այնպիսի մի պատրուակ և պատճառ բերեց անդամների առաջ որ միաձայն ամենին զարմանք պատճառեց, այն է, որ եթէ մենք ուրիշ տեղ երթանք նուագելու մեզ շատ վտանգներ կը սպառնան, այսինքն կառավարութիւնը մեզանից կը պահանջէ թէ ինչու ենք գնացել և Հայկազեան վարժարանում նուագել նախ քան Վեհափառ Շահին ներկայանալը. թող յարգելի ընթերցողը չը ծիծաղի այս երախայամիտ պատրուակի վերայ, բայց գործը տակ թաքնուած էր այլ միտք և ապացոյցն այն է որ խմբապետի փոխանորդից ճիշդ նոյն օրը գրաւոր հրաման ստացանք որ եթէ երթանք նոյն վարժարանում նուագելու, դա ոչ մի վնաս չունի։ Կարծեմ „Շաւիղի" ընթերցողներին յայտնի է որ մի շաբաթ առաջ հայր. Այվատեանի հովանաւորութեամբ 2—5 դրան տոմսակներով մեր նուագիչ խումբը նորաբաց

*) Տնօրէնն է Վահան Մեսրոպեան եւ քարտուղար Վաղարշակ Բժշկեանց։

Ես մտնեցայ նոյն եւ իմ վերջին հրաժեշտս տալով հեռացայ. Հետեւեալս բոլորն կոչում էին «Բարի ճանապարհ»:

Առաջնորդիս հետ գիւղից դուրս գալով փոքրիկ ձորակի միջով դէպի վեր առաջ էինք գնում: Ձորակի երկու կողմն էլ Օղացոց արտերն էին ընկած, որոց մէջ գործում էին աշխոյժ գիւղացիք: Մենք կէս մղոն գնալուց յետոյ բարձրացանք մի բարձր լեռան վերայ, որին ասում են «Սալղաղի». այս լեռնաշղթան որ Երասխի ափից սկսած շարունակւում է դէպի հարաւ եւ ընկած է ամբողջ Ղարաբաղի միջով բաժանում է Հասանովը եւ Մեշափարն Տէզմալից:

Լեռան վերայից մինչեւ գետը որ գտնւում է արեւելեան կողմը կէս մղոն տարածութիւն է. ես չեմ կարողանում նկարագրել այն դժուարութիւնները, որը կրեցինք այդ կարճ տարածութեան մէջ. գլխի վրայից դէպի ցած պիտի գնայինք քարերի վրայով. երբեմն չորեքչոք, երբեմն նստած օձի պէս սողալով եւ երբեմն էլ գլխի վերայ գլորուելով թփերի յետեւում ապաստանարան էինք գտնում. Բայց ազատ գիւղացիք Թռչնի պէս Թռչկոտում էին այդ քերծերի վերայ, որոց համար կարծես մի դաշտ կամ թէ մի հարթած ճանապարհ լինէր: Վերջապէս մենք անպատմելի նեղութեամբ հասանք գետը:

Այս գետը կոչւում է Ըզըրնան չայի. մենք չայը անցնելով, առաջ էինք գնում դէպի արեւելք խիտ անտառի միջով. Թէպէտ եւ օրը գարնանային էր եւ արեգակը այրում էր բոլոր բուռնկանութիւնը իւր տաքութեամբ, սակայն մենք արեւի երեսը չէինք տեսնում, այլ բարձր ծառերի միացած գագաթների շուքի տակով անցնում էինք:

Մենք հասանք Մեշափարի Մզկիթ գիւղը:

Մզկիթ գիւղի արեւելեան կողմից բարձրացած է սրածայր գագաթով Դայիր անունով լեռը, որի գագաթից երեւում է ամբողջ Մեշափարի գաւառակը: Հարաւից եւ արեւմուտքից, նոյնպէս շրջապատուած լեռնաշղթայով, իսկ հիւսիսային կողմը ընկած է լայնատարած դաշտը Մզկիթի գետակի մօտով:

Ղարաբաղի նշանաւոր գիւղերից մէկն էլ Մզկիթըն էր շատ հին ժամանակներից մինչեւ վերջերս, Սա էլ Խանադաղի պէս ունեցել է նշանաւոր մելիքներ, որոնցից աւելի նշանաւոր են քաջութեամբ Մելիք Աբրահամը, որ երկար պատերազմելուց յետոյ ինքն էլ ընկաւ պատերազմի դաշտում քաջաբար: Սորա որդին Մելիք Ալլահվերդին որ քաջութեան փոխարէնն Ատրպատականի իշխանից ստացաւ Ղարաբաղի հայոց կառավարութիւնը: Ամենավերջինն եղաւ Մելիք Բաղդասարը որի անունը այժմ էլ գովւում է Ղարաբաղում: Սորա մահով վերջանում է եւ այս տոհմի մելիքութիւնը:

Վերջին բարբարոսութեան ժամանակ գիւղացիք բոլորը դուրս էին եկել եւ Մզկիթը մնացել էր անբնակ, տուներից մի քանիսը աւերակ էին դարձել եւ մի քանիս կանգուն էին մնացած. կանգուն էին եւ Մելիքէնց հոյակապ տունը. սորա առաջ կար մի շատ հին տանձենի ծառ, որի վերայ, գիւղացուց ասելով, մելիքները մեղապարտների ականջները էին

Հայկակեան վարժարանում հանդէս տրաւ. Հայրիկի օծման տարեդարձի առթիւ ի նպաստ իւրեան: Ես հարցրի պ. տնօրէնից թէ ինչու այստեղ հանդէս տուինք, և ոչ մի պահանջողութիւն չեղաւ, այլ միայն այնտեղի համար է լինելու այդ դիտողութիւնդ. տեսէք ինչ պատասխան ստացայ „Այստեղ մեր տունն է. մեր վարժարանն է, իսկ այնտեղ.... այս խօսքերից կարելի է հետևցնել որ Հայկազեան վարժարանը, որ Թէհրանի երիտասարդաց ընդրիմեծամասնութեան կրթիչն է եղել այս օրերս գտնւում է հրէաների ձեռքը: Սակայն այս պատրուակն էլ անդամ նրանց առաջ նշանակութիւն չը գտաւ. որով և չը լիսզոցան մեր պնդումները. ուստի մի այլ միջոցի դիմեցին, առաջարկեցին որ ընդհանուր ժողով լինի, և պայմաններ առաջարկուի. եթէ ընդունեց Հայը սուրբը կերթանք, եթէ ոչ մենք մասնաժողովից կը հրաժարուինք: Այս ինչեր էին այդ պայմանները, նախ թմբին պէտք է կանխիկ 10 թուման փող տչուիրացի դասատուների ընծայից, այն ինչ բոլորովին անպատշաճ էր մեր խմբի համար պահանջել մի չնչին գումար իբր վարձ: Երկրորդ պէտք է ինքը Հայը սուրբը գրաւոր կերպով երաշխաւորէ որ եթէ մի օր կառավարութիւնը պահանջէ թէ ինչու էք գնացել Հայկազեան վարժարանում նուագել մենք յայնժամ մի ապահովագիր ունենանք մեր ձեռքում, երկրորդ այս, չորրորդ այն, վերջապէս 4 կամ 5, նոյնանման դատարկամիտ պայմաններ էին առաջարկած Հայը սուրբին, ասելով որ եթէ կընդունէք, կը գանք եթէ ոչ, ոչ, յայտնելով թէ Երաժշտասիրաց ընկերութեան ընդհանուր ժողովն այդպէս է կարգադրել. մինչդեռ խեղջ ընդհանուր ժողովի, այս բանից միանգամայն անտեղեակ էր, այսինքն, գումարուեցաւ մի ընդհանուր ժողով և շատ վիճաբանելուց յետոյ մասնաժողովն յայտնեց որ շատ լաւ, մենք Հայը սուրբից նամակով կը խնդրենք, որ մեզ ապահովացնէ տերութեան կողմից, բայց սորանից ուրիշ ոչ մի պայման չառաջարկեցին. և մեզ ցանեցին իրանց գլխից և մեզանից յետոյ լիշածս պայմաններով երկար մի նամակ էին ուղարկել Հայը սուրբին, կասկած չը կայ այս դէպքում Հայը սուրբն պէտք է բարկանար մեր դէմ և մինչև անգամ չուզէր լսելու մեր անունը: Եւ մենք անդամներս այս գործից տեղեկութիւն չունենալով երբ երկրորդ օրն գնացինք պատրաստուելու որպէս զի գնանք. տեսնենք պ. տնօրէնն հրամայում է, սպասեցէք մեր նամակի պատասխանը գայ յետոյ, ինչ նամակ..... այս դէպքում նամակը պատասխան չուներ. զուր խաբել և խաղացնել էր մեզ: Ահա մի առ մի եղելութիւնը, և ես այս գրում եմ որպէս զի գործից տեղեկութիւն չունեցողները չը դատապարտեն ինձ որ ես իմ ստորագրութիւնը չը յարգելով հեռանում եմ այդ խմբից, այս դէպքում ես իմ ազգս և վարժարանս աւելի եմ սիրում և յարգում քան ստորագրութիւնս և թող մընացեալ անդամներն ևս իմանան որ այդ իրանց կողմից վերին աստ՝ ճանի թուլութիւն էր իրանց թող տալ որ մի երկու հոգի այդպէս խաղան ընկերութեան ընդհանուր ժողովի հետ, և Երաժշտասիրաց խումբն էլ մի գործիք շինեն իրանց անձնական կիրքերին յագուրդ տալու, և ազգային հաստատութեանց հետ այդպէս վարուելու ինչպէս որ վարուեցան:

Նուագիչ խմբի նախկին անդամ

Մամիկոն Գրիգորեանց:

ՆԱՄԱԿ ՄԱՐԱՂԱՑԻՑ

23 Սեպտեմբերի 94

Այս օրերս ժամանեց այստեղ Արժանապատիւ տէր Տաճատ քահանան: Բարեկրօն Հայրը պիտի վարէ Մարաղայի և Սուլդուզի առաջնորդական փոխանորդի պաշտօն և միևնոյն ժամանակ այստեղի դպրոցում տեսչի և ուսուցչի պաշտօն, զբաղուելով առաւելապէս կրօնական դասերի հետ: Մարաղայի հայ հասարակութիւնը, որի միջից անպակաս է եղել ընտանեկան և հասարակական բազմաթիւ մանր մունր վէճեր, վաղուց ի վեր սպասում էր այդպիսի մի արդարադատ հովուի առաջնորդութեանը: Ուստի մենք ի սրտէ կը փափագէինք, որ արժանապատիւ Հայրը զգոյշ կենալով մի քանիների խարդախութիւններից լզործէր այնպէս, որ կարողանար ի վերջոյ ժողովրդականութիւն վայելել պաշտպանելով յամենայն դէպս հասարակութեան իրաւունքներ—բռնաբարուած դասակարգի արդար բողոքները:

Տեղիս նախկին առաջնորդական փոխանորդն էր պ. Միրզա Աֆթանդէլեան բայց այժմ նա վերահասութիւն է անում հայերի քաղաքական գործերին: Երեսփոխանական կնճռոտ, հանելուկ դարձած խնդիրն էլ լուծւում է վերջնականապէս:

Փողոցի տարիներից ի վեր խեղդուած ձայնը արձագանք է գտնում վերջապէս: Մերժւում է երեսփոխանական պաշտօնից արիւնաքամ վաշխառու Լալան, ընտրւում է ընդհանուր ձայնով Մղդոսի Յակովբ Մնացականեանը:

Շատերի տունը քանդել էր Լալան, շատերին թողել էր օրուայ հացի կարօտ, շատերի ձեռքը տուել էր նա պանդխտութեան գաւազանը. մատնութիւն, կաշառակերութիւն, խարդախութիւն ինչ տեսակ կեղտոտութիւններ տես չէր խնայում:

Նորերումս էլ ծագած մի ուրիշ-խընդիր հասարակութեանը երկպառակութեան մէջ է ձգել: Լալան անամօթութիւնը վիզն առած էլի ձեռք չի քաշում, դիմում է ամեն տեսակ ստորնութիւնների:

բեհեռում, ծատի վերայ գիւ բիվ գներից մնացած կային, գիւղացիք ասում էին թէ մելիքների խոտ ծիցն է:

Վերջերս եղբարք Թումանեանք այս կողմերը մի բանի գիւղը գնելով ուզա հետ գնել են և անքանչ Մզկիթը, որոնք 24-ի չափ տնւոր քիրելով բնակեցրած էին երբեմն հարիւրաւոր տուն ունեցող Մզկիթում:

Նորեկները գնա զբաղուած էին իրանց բնակարանների շինութեամբ, մենք ասա մի օր մնալով ճանապարհ ընկանք դէպի Ողան:

Նրանք ժամուայ մէջ հասանք Ողան;

Այս գիւղի ընկած է մի բանի հազարանոց նոր փարանի տեղամ. մի դողից հոսում է փոքրիկ գետակ, որի երկու կողմը շրջապատուած է անտառով:

Ողանը բազկացած է 50-ից: Այս գիւղը եղբարք Թումանեանց ծննդավայրն ու հայրենիքը լինելով վերջերս գնել են:

Ցիշեալները Վարաբաղից մի լաւ որմնադիր էին բերել տուած և սկսած էին մի բարաշէն եկեղեցու շինութիւնը. սկսած օրից անցել էր մի տարի սակայն վերջացած չէր իրերի պակասութեան պատճառաւ: Այս եկեղեցին Ղարաղաղում առաջին տեղը զբաղած է բռնի թէ մեծութեամբ և թէ շքեղութեամբ.

Զայն կար թէ յիշեալ պարոնները յետ աւարտման եկեղեցւոյ պէտք է շինեն և մի ուսումնարան կից եկեղեցուն. այս ծայնը մեծ ուրախութիւն էր պատճառած թէ գիւղացւոց և թէ մեզ. սակայն ինչպէս լսում ենք դեռ չեն սկսած շինել:

Թէ Ողանը և թէ Մզկիթը քահանաներ չունին հարկաւոր եղած ժամանակը ուրիշ գիւղից են քահանայ բերում:

Պրն. Թումանեանը բացի այս երկու հայ գիւղերից գնած են և մի բանի Քրքրանակ գիւղեր, որոնք գտնւում են Մզկիթի և Ողանի շրջակայքում:

Մենք Ողանից ճանապարհուեցանք դէպի Քլաա: Կէս ժամ գնալէն յետ պատահեցանք մի փոքրիկ ձորակի որի միջից դուրս էր բղխում մի բաւական սառն ու սպիտակ աղբիւր: Արեւի տաքութիւնից ողանցւոց խաշնարածները և տաւարածները իրանց հօտերով ու երամակներով եկել էին այդ աղբիւրի մօտ գտնուած ծառերի շուքի տակ զովանալու:

Ես մօտեցայ աղբիւրի ակին, որտեղ նստած էին հովիւները և ջուրը մեր առնելով խմել կամեցայ: Ցանկարծ հովիւներն մեծ գոչեց, իրանց սովորական բառաբառով. «Էյ բարեկամ, էտ հինչս բրլիս խըմամա»:

—Ինչու, ասացի ես:

«Որ չպանաս»

—Մինթէ այս ջուրը խմողը խենթանում է:

«Հա, սրան կասն խլթի ջուր (խենթի ջուր) հու որ խմի կգիժուի. առաջ մեր շէնն էլ տեղս լալ էս ըղբրի մօտ տեղես անէ ալ ջուրն լալ, խմելիս, ուզուր համար ալ ամեն վզնեցիք բըկն լալ. յետոյ շէնը տարալն օրնշ տեղ շինալ մի օրէշ ջրի մօտ, որ չբլանան. մընէկ մեր շէնացիք տեղեսան է ջուր չրխմելիս, որ բլանան ոչ»:

(կը շարունակուի)

ՇԱՒԻՂ

Պ. Ստեփան Պողոսեանց կնքելով իւր վերջին մահկանացուն, թողնում է անշարժ ու շարժական կալուածների մի ահագին ժառանգութիւն իւր որդի զաւակներն ու այրի կնոջը: Չի անցնում հանգուցեալի մահուանն օրից մի երկու օր, որը զաւակներն էլ Պաշճանում են:

Այրի կինը անպաշտպան մնալով ամուսնանում է մի ուրիշ մարդու հետ այդ մարդն էլ բանն այն է որ Լալայի 'բալեկամն է: Այժմ հարցը նրանումն է որ հանգուցեալի թողած ապրանքը իւր եղբօրը յանձնել, թէ կնոջը: Ինչ որ է Լալան քաւոր ու փեսաներին իւր շուրջը հաւաքած կամենում է ինքը գրաւել հանգուցեալի բոլոր ստացուածքը, ով գիտէ կյանձնի նրանում որ հարկն է, թէ ինքը կը կլանի: (Հանգուցեալի հետ Լալան պասիկ ոխերիմ էր): Իսկ միւս կողմից էլ հասարակութեան մի ուրիշ մասը արդարացի է գտնում հանգուցեալի եղբօր կողմը:

Այդպիսի դէպքերում մեր հոգաբարձուներն ու այլ ժողովրդական անձինք զարմանալի կերպով անտարբեր են գտնուում, ինչու գործը մեծացնել, ինչու տեղի տալ ժողովրդի մէջ նորանոր պառակտումների. մէթէ մեր պատուելի աղասիկալները (ծերերը) իրանք իրանց մէջ չեն կարող այդ գործը մի կերպով վճռել, էլ գործը չը ձգել դատաւորի: Այո՛, շատ լաւ կերպով կարող են վճռել: Հանգուցեալի ամբողջ ստացուածքը ասում են 500—600 թուման արժողութիւն ունի:

Շատ լաւ: Եթէ այդ գումարից մի բաժին հանեն կնոջը, մի բաժին էլ տան եղբօրը և մնացեալն էլ յատկացնեն եկեղեցուն կամ դպրոցին, ով մի խօսք կասէ: Ոչ ոք: Այդ կերպ վճիռը, կարծեմ, ամեն մի խոհական անձ էլ կը հաւանի:

Օրոր.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք որ բազմաթիւ ստորագրութիւններով մի հանրագիր ներկայացուած է Գեր. Հայր Այվազեանին, խնդրելով որ նա որպէս Առաջնորդական տեղապահ Թէհրանի ազգային վարժարանները կանգնա որ դրութեան մէջ գնէ, եւ համերաշխութիւն ոչ քերէ գործող մարմինների մէջ: Որպէս մեզ տեղեկութիւն են տալիս Հայր Այվազեան ամբողջ Թէհրանի հասարակութիւնը ընդհանուր ժողովի է հրաւիրած յառաջիկայ կիրակի օրուայ համար, այդ մասին հարկ եղածը կարգադրելու:

—

Մեզ խնդրում են հրատարակել հետեւեալ նկատողութիւնը: Անցեալ կիրակի ամսոյս 2-ին, Ընթերցարանաց ընկերութիւնը տուեց մի իրեկոյթ ուրտեղ խօսեցին Գերապատիւ Հայր Այվազեան եւ պ. Դոկտոր Բազիլ: Հայր Այվազեան իւր դասախօսութեան վերջերում ասաց մի քանի խօսքեր, որոնք արժանացան հասարակութեան երկար ծափահարութեանց: Հայր Այվազեան ասաց: Ով Թէհրանցի երկու կուսակցութիւններ կամ միացէք եւ միասին գործեցէք յօգուտ հասարակութեան կամ հեռացէք եւ թողէք հասարակութիւնը գործելու: Նա խելօք է եւ կարող է ինքնին դործել: Ժողովուրդը երկար ժամանակ ծափահարում էր Հայր Այվազեանի այս խօսքերին: Բայց չգիտեմ արդեօք հասարակութեան այդ ոգեւորուած ծափահարութիւնը նորա համար էր, որ վարդապետը նորան խնդրեց անուանից. թէ նորա համար, որ երկու կուսակցութեանց էլ պատն հիրաւորեին եւ իւրաքանչիւրն զործէին: Հայ Աստուած, որ այդ վերջինը լինի:

—

Այսօր երեկոյեան ժամը եօթին տեղի ունեցաւ Թէհրանի ազգային Ուսումնասիրաց ընկեր. ընդհանուր ժողով: Ատենապետը թէեւ կարճառօտ բայց շատ հասկանալի կերպով բացատրեց այս վերջերս Թէհրանում անձնական հակառակութիւններից ծընունդ առած ներքին պառակտումների սկզբնապատճառները որոնք հետզհետէ երթալով կուսակցութեան երեւոյթ են ստացել, եւ շատ իրաւամբ շեշտեց այն կէտը թէ մի հակառակութիւն որը յառաջ է եկել ոչ թէ սկզբունքների եւ դաղափարների տարբերութիւնից այլ, ազգային գործերում մի որոշ կանոնադրութեան բացակայութիւնից. բացատրեց միեւնոյն ժամանակ հասարակական գործերը ընկերական դարձնելու անյարմարութիւնը եւ անօգուտ լինելը ասելով, քանի որ հասարակութիւնը ինքը չէ մասնակցում. չէ հսկում իւր գործերին, յառաջ է գալիս անձնական հաշիւներ եւ անձնական հաշիւներից սարսափելի հակառակութիւն որոյ առաջը առնելու համար ընկերութեան գործադիր ժողովը յարմարէ դատում տալ իւր հրաժարականը մի ամենակարեւոր խնդիր դնելով ընկերութեան սեղանի վերայ խնդրելով միանգամայն որ նուիրագործուի այդ խնդիրը, այն է ինչ որ եղել է իրանց ձեռքում իբրեւ ընկերական, դարձնեն հասարակական—ազգային, այսինքն ընկերութիւնն էլ իրան լուծուած համարէ եւ գործը յանձնէ այն գործադիր ժողովին, որ ընտրուելու է վաղը ազգային ընդհանուր ժողովում: Այդ առաջարկութիւնը շատ սիրով եւ մրածայն հաւանութեամբ ընդունուեցաւ ժողովականներից, որով եւ գործադիր ժողովի հրաժարուելուց յետոյ լուծուեցաւ ազգային Ուսումնասիրաց ընկերութիւնը, եւ համաձայն կանոնադրութեան 38-րդ յոդուածին ընկերութեան շարժական եւ անշարժ կայքը, դրամական եւ ամեն յանձնառութիւնները մնաց ազգային, այդ ամենը արձանագրուեցաւ: Ընկերութեան այդ վճիռը եւ որոշումը պիտի ներկայացուի ընկերութեան նախագահին: ամենապատիւ Նարսի սրբազան արքեպիսկոպոսին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պէտերբուրգ 27 սեպտ. „Նովոէ-Վրէմիա“ լրագիրը այն կարծիքն է յայտնում թէ եւրոպական և ոչ մի պետութիւն Ռուսիայի չափ իրաւունք չունի միջամտելու չինացւոց և ժապոնացւոց պատերազմին, մանաւանդ որ Կորէան, ասում է նա, Ռուսիոյ պաշտպանութեան ներքոյ է, Ռուսիան միայն կարող է վերջ տալ այդ պատերազմին: Իսկ „Նովոստի“ լրագիրը պնդում է թէ պէտք է Չինաստանը բաժանուի Ռուսիոյ, Անգլիոյ և Ֆրանսիայի մէջ:

—Ամստէրդամ 28 սեպտ. Ճավայի Բաթաւիա մայրաքաղաքից մի հեռագիր է հասել որ հոլանդական զորքի հրամանատարը որ այն կողմերի ըմբոստ ժողովուրդը պատժելու պաշտօնով էր գնացած շատ դժուարութեանց է հանդիպել և հակառակ ծովի վրայից անընդհատ տրած կրակին չէ կարողացել Լեմբէքի Մօմբոմ մայրաքաղաքը տիրել, ուստի դադարեցուած խաղաղութեան դաշն է կապել Լեմբէքի բնակիչների հետ: Մակասար կղզու բնակիչներն էլ որոնք մեծ մասամբ չինացիք են և Հոլանդիոյ հպատակներ, ապստամբել են:

—Լոնդոն 29 սեպտ. Ռէյտերի զորձակալութիւնը Շանխայից հեռագրում է որ ժապոնական զորքի մէկ ստուար թիւ ցամաք է ելել և բանակել է Զէֆուի հիւսիս-արեւելեան կողմն որ Փէչիլի ծոցի բերանումն է: Չինական կառավարութեան կողմից այն նահանգի կառավարչապետին Լիհունկ-Զինկին հրամայուած է որ ինքը անձամբ չինական զորքի հրամանատարութիւնը ստանձնէ: Շանխայից գրում են որ չինացիք Կորէան դատարկել են և իրանց զորքը կեդրոնացրել են Լին-Զինկում որ գտնուում է 30 միլ հեռաւորութեամբ Եալու գետի արեւմտեան կողմում, որպէս զի ժապոնացւոց դէպի Մանչուրի յառաջ խաղացումն արգիլեն: Շանխայից մի ուրիշ լուր է հասել որ ասում է թէ չինաց զորքի մեծ մասը զէնքի և պատերազմական այլ պիտոյքների վատութեան պատճառով զորքի միջից փախուստ են տուել: Տոկիօից լուր է հասել որ չինաց կառավարութեան պահապան և պահակ զորքերն ևս կանչուած են: „Տայմզ“ լրագիրը հաղորդում է որ ժապոնական նաւերը թուրքական նաւահանգստին տիրել են: Ռէյտէրի թղթակիցը Եօկօհամայից հաղորդում է որ ժապոնական ամբողջ ազգը խստիւ պնդում է տերութեանը որ այս պատերազմը մինչև վերին աստիճանի խստութեան հասցնէ և ուղղակի յարձակում գործեն Պէկինի վերայ, ժապոնական ազգը խստանում է իւր պատրաստականութիւնը վատնգի ամենայն դէպքերում էլ: Տոկիօից լուր է հասել որ ժապոնական կառավարութիւնը որքունի պահակ զորքին ևս պատերազմի է կոչել:

—Նիւ-Եօրկ 29 սեպտ. „Նիւ-Եօրկ Հէրալդ“ լրագիրը Շանխայից մէկ հեռագիր է հրատարակել որ Չին-Էին-Զինում հաւաքուած չինական զորքի մէջ խռովութիւն է ծագել և զինուորները կոտրել են իրանց զէնքերը ի միջի այլոց և հեռագիրը ասում է թէ Պէկինում մեծ սարսափ է տիրում և յուսահատական դրութեան մէջ է չինական կառավարութիւնը:

Արտօնատէր-Հրատարակիչ՝

ԱՆԴՐԷԱՍ ԲԼԿՆԱԶԱՐԵԱՆՑ